լունակեն իրենց քաղցրահնչիւն գրլգլոցներն, դեռ կը փսփսան մեր ականջ ի վեր։

Կապուտի և Մատուռայ վերայ այսչափ բաւ համարելով քանի հատուած ևս պատմագիրներէն առնելով՝ բացատրութեամբ կը ներկայացնեմ այս տեղ։

«Սոյնպէս և Թադուհին Փառանձեմ առեալ բազում գանձս արքունեաց դնաց հանդերձ Մուշեղաւ Մամիկոնէիւ յԵրասխաձոր ամուր բերդն Արտագերս, զոր նորոգեալ էր Արշակ»։

Ըստ իմ կարծեաց Երասխաձոր լինելու է Երասխի աջ ափը բռնած քանի վայրեր, Կաղզուանից յարևմուտս մինչև Մատուռ որ նոյն իսկ այս մատուռս ևս Արտագերիցն է, որ շատերն հանդէպ Կաղզուանայ՝ Երասխի ձախ ափից 1 ժամ բարձր Գերս գիւղի մոտերն կը դնեն, ուր բերդի հետք չերևիր։

Գերսի արևելեան կողմերն իրօք կայ հին բերդերու աննշան հետքեր, սակայն չունի այն յարմարութիւններն որ ժամանակի պահանջման համեմատ այն տեղ պատսպարել հարկ լինէր։

Արդէն մենք գիտենք Հայաստանի ամենէ յուզեալ ժամանակն Մերուժանի, Վասակայ և Յուսուփայ ժամանակներն էր, որ ժողովուրդն իրենց համար ապաստան և ապահով գտնելու էր շատ անառիկ և ընդարձակ վայր, այնպէս որպէս տեսանք Մատուռայ բերդն և Թէքքէ—Բինէ ասուած հսկայ անառիկ բնական բերդն, որ և ըստ պահանջման մի խուլ վայր կը գտնուի։

«Մերուժան և Վահան եկեալ աշխարհս մեր և գտեալ զայն իբրև անտէր և անպահապան, դիմեցին նախ ի վերայ բերդին Արտագերից, ուր ամրացեալ էր դրժխոյն Փառանձեմ և պաշարեցին զայն և բազում